Երկրի արքայութեան վերայ հայ—քրիստոնէին մտածելն անգամ մեղք է։

Միսիօնարների տարածած այդ երկնային գըրքերը քրքրելիս, աչքս ընկաւ մի երկրային գրքի. «Դաւիթ-Բէկի» վերայ. ուզում էի աչքերիս չը հաւատալ։ Բայց նա էր։

«Որտեղից էք ճարել այս գիրքը» հարցրի։

—«Քրդերից», պատասխանեցին։

«Քրդերի՞ց», այս անգամ էլ ականջիս չէի ուզում հաւատալ։ «Ի՞նչպէս թէ քրդերից»։

—«Ա՛յո, քրդերից, այստեղ ի՞նչ զարմանալու բան կայ», ասում էր տանուտէրը։ Քըրդերը անցեալ օրեր հինգ օրինակ բազար բերելով հատը հինգ կոպէկով ծախեցին»։

Չը լինի թէ, մտածում էի, քրդերն էլ հոգս են տանում մեր վիճակի վերայ և արդէն սկսել են հայերի մէջ պրօպագանդ անել, ընթերցանութիւն տարածել։ Կեցցե՛ն քրդեր, ուղղութիւնը վատ չէ, նոցա տարածածը երկրի թագաւորութեանն է վերաբերում, արժան է. այդպիսով նրանք միսիօնարներից երևի կը խլեն յաղթութեան մրցանակը։

«Բայց քրդերը ո՞րտեղից են գտել», կրկնեցի։

—«Դա շատ պարզ է», աւելացրեց տանուտէրը։ Քրդերը կողոպտած կը լինեն մի հայի, վեր առած կը լինեն նորա փողերը ու չորերը, որ